

**Տարեկան գիմը 10 բուրլ, կէս տարվանը 6 բուրլ:**  
**Առանձին համարները 5 կոպէկով:**

Յակի թէ լսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

( ) տարաքաղաքացիք դիմում են ուղղակի  
Տիգլուս. Պետական „Մաճ“

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի խուզերին:—Ն ե ք ի ն տ ե ս ո ւ թիւն:  
Նամակ Շուշոց, Նամակ Բագուից: Ներքին լու-  
րեր:—Ա, ը տ ա ք ի ն տ ե ս ո ւ թիւն: Գերմանական  
լրագրութիւնը հայերի մասին: Միսիօնարիները թիւր-  
քիայում: «Քէրձըմանի Հքքեարի» դատը: Նամակ  
Գերմանիայից: Արտաքին լուրեր:—Խ ա ռ ն լու-  
ր ե ր:—«Մշակի» հեռագիրներ:—Յայտարարութիւն-  
ներ:

## ԹԻՖԼԻՍԻ ԽՈՒՂԵՐԻՆ

Խուլ ասելով մենք հասկա-  
նում ենք այնպիսիներին, որոնց լը-  
սելիքը շատ նուրբ է օպերայի հա-  
մար, բայց շատ բժացած աղեր-  
սալից հեծեծանքի, դիւրըմբոնող  
հեշտասէր սիրուհու հրամանը,  
բայց անմատչելի ծնկաչոք սովա-  
մահի լացին, շատ սուր մոլութեան  
հրաւերին, շատ ծանր մարդասի-  
րութեան ձայնին, շատ սովոր  
այն ոսկու ծընկոցին, որը հարկա-  
ւոր է յափշտակել, բայց միանգա-  
մայն խորթ և տնընտել այն ա-  
րօրի խրբոցին, որով ձեղքում է  
երկիրը բրտնաջան հայը մի կտոր  
հաց գտնելու և իր հայրենիքում  
առարինութեամբ ապրելու համար:  
Երբ այդ ծանր աշխատանքն էլ է  
հային ուրանում, զրկելով նորան  
իր բոլոր ջանքերի արդիւնքից և  
հայը դիմում է իր ոսկեպատ ա-  
րիւնակցին, բայց զանցառութեան  
հանրհառում՝ մնայ առահետիներին

կէտից է՝ նայում՝ վասն որոյ այդ  
կէտից միայն առաջ կը գանք  
մենք թիֆլացու հետ խօսելու  
ժամանակ:

ՄԵՆՔ նորան կասենք. եթէ  
դու սառնապրտութեամբ կը նա-  
յես, ինչպէս հարիւրաւոր մանուկ-  
ներ ձիւնի մէջ թափվում են նո-  
րա տակ արմատներ վինտուելով՝  
դու կը զղջաս, եթէ դու կը ծի-  
ծաղես, երբ յուսահատների ձայնը  
երկինքն է տարածվում՝ դու կը  
վսասվես, եթէ անտարբեր կը  
նայես ինչպէս երեք միլիոն ժո-  
ղովուրդ ցիր ու ցան է լինում  
իր երկրից՝ դու չարաչար կը պա-  
տժվես—դու կը զրկվես քո սե-  
փական օգտից. դու կը տեսնես  
որ Ծփիլիսի տապ երկինքը եր-  
բեմն սևացնող, սոված մորեխ-  
ները իջան երկրի վրա և մարդու  
պատկերով, հէնց քեզ հասկանալի  
հայկական լեզուով սկսեցին քեզնից  
հաց խնդրել. եթէ կը մերժես՝  
զուով կառնեն, եթէ դռներդ կը  
փակես՝ կը փշեն դռներդ, եթէ  
քո հացը կառաջարկես ուտելու՝  
քեզ էլ հետը կուտեն: Այդ ժա-  
մանակ միայն կիմանաս թէ ինչ  
ասել է անտարբեր նայել այն  
մարդկանց վեճակին, որոնց յոյսը  
քեզ վրա է այժմ՝ աչքը քո օգ-  
նութեան ճանապարհին....

Վասն որոյ թիֆլիսցու իրան  
օգտի, անձնական շահի համար,  
մենք առաջարկում ենք նորան  
վաղօրօք հոգալ տաճկահայոց սո-  
վելոց համար, նուիրելով իրա-  
քանչիւրը իր ունեցածի հէնց մի  
հիւլէն, մի ատօմը: Խուլերի մէջ  
մենք դիմում ենք նախ այնպիսի-  
ներին, որոնք լինելով բնիկ թիֆ-  
լիսցի, ունելով իրանց քաղաքացի-  
ների հետ սերտ յարաբերութիւն,  
հաշիւ և առևտուք, հետեւում են  
այն անձների օրինակին, որոնք  
թէպէտ թիֆլիսի մէջ են ապ-  
րում և գործում: բայց իրանց  
շրջապատող հասարակութեան հետ  
ոչինչ յարաբերութիւն և մաս-  
նաւոր գործ չունեն:

ԳՐ. Նիկողոսին

## ԵՐԵՒԱՆ ՏԵՍԻՄՈՒՄ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

## 14 Փիետրվարի

Դառնում եմ Շուշի. Եռնքը պիտի ունենայ:

11

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

11-ին փետրվարի

Նորին Օծութեան ամենախոնարհ որդիական խնդիրս մատուցանելուց յետոյ, կամենում եմ մի խորհուրդ տալ հայ ծնողներին և կնքել նամակը: Դուք, հայ ծնողներ, աւելի խղճանակով վարված կը լինէլիք Եթէ երկրորդ, երրորդ և այլ կին առնելիք, քան թէ ձնը որդիների ազատ սէրը և զգացմունքը ձնչերով այս կամ այն—միայն ձեր հաւանած—աղջկերանց հարս ունենալու համար, բռնանաք նրանց իրաւունքի վրա, ուրեմն և բռնի գալիքում հայ թատրօնասէրները տուին երրորդ ներկայացումն, յօդուած հայ թատրօնական բեմի և ղեկօրացիայի: Այս անգամ ներկայացրին «Թուղթի խաղացողի կեանքը»: Առաջին երկու ներկայացումն ևս յաջող անցան, որովհետեւ թատրօնասէրները ընտրել էին իրանց ոյժին համեմատ պիեսաներ, իսկ ինչ վերաբերվում է երրորդ ներկայացման, այդ մասին ես անյարմար եմ գտնում խօսելու որ մի գուցէ վիրաւորեմ թատրօնասէրների սիրտը: Սակայն պէտք է ասած որ «Թուղթի խաղացող»ը

ինքը չունի այնքան թատրօնական յարմարութիւններ, ինչպէս կարծում են առհասարակ։ Այդ պիեսայի մէջ համարեա թէ բոլորը պատահական է և ինքը պիեսան առաւել րօմանիզմ է քան թէ դրամատիզմ։ Բայց և այնպէս մենք խորհուրդ կը տայինք մեր թատրօնասէրներին, որ նրանք միւս անգամ չը սխալվեն ընտրել այդպիսի գժուար պիեսաներ։

ր., Gäschke 1 ր., Մկրտիչ Վ. Ղոկասեանց 1 ր.,  
Հազարապետ Սոլլիսանեանց 1 ր., Հազարապետ  
1 ր., Խ. Շահնազարեանց 1 ր., Դավիթ Դավթեանց  
1 ր., Յովհաննէս Աղամալեանց 1 ր., Հայ մին 1  
ր., Խվան Եղիազարեանց 1 ր., Emile Perrin 50  
կ., Ефимъ 50 к., Михаилъ Кириловъ 50 к.,  
Григорій Доминовъ 50 к., Григорій Ефремовъ  
50 к., Վասիլ Յարութիւնեան 50 կ.. Ընդամենը

Ասում ենք որ թատրօնամէջները միտք ունեն 38 բուբլ.

բարեկենդաններին ներկայացնել «Շուշանիկ» ողբերգութիւնը. Մենք մեր կողմից խորհուրդ չէինք տայ մեր թատրօնասէրներին ներկայացնել պատմական փոտած պիեսաներ, աչքի առաջ ունենալով Սունդուկեանցի Պետքիս և Յամաթաբալայցի նման գեղեցիկ գրուածները, որոնք ներկայ կեանքից լինելով, կարող են առաւել լաւ ագրեց ութիւն ունենալ, թէ նոյն իսկ խաղացողների և թէ հասարակութեան կեանքի վրա. Յոյս ունենք, որ թատրօնասէրները չեն դադարի շարունակարար ներկայացնեմներ տալուց և իրանց անձնական թշնամութիւնները չեն խառնի այդպիսի ազգօգուտ գործերի մէջ, ինչպէս երևում է այժմ այդ անում են. Իսկ ինչ վերաբերում է հասարակութեան, այդ կողմից գէտք է խօսառվանած, որ նա սառնչէ նայում թատրօնական գործին, այլ յաճախում է և յուսով ենք, որ առաւել համակրելով այդ գոր-

ծին, կօդսէ ինքն ևս իր կողմից թէ նստապէս և  
թէ բարոյապէս, որպէս զի կարելի լինի մի մշտա-  
կան խումբ կազմել, որը, մեր կարծ լքով անհրա-  
ժեշտ է ունենալ բագուի նման հարուստ և հայտ-  
շատ քաղաքին.

Վերջացնելով ներկայ նամակը, մենք պարտենք  
համարում յայտնել մեր անկեղծ յնորհակալիքը աղ-  
նիւ տ. տ. Ար զումանեանին և թումանեանին, ո-

Ստացածք ՔԱՐՄՈՅԻՌ մէջ բազկող պ. Յար-  
գիս Յովհաննէւանցից 10 ըուել յօդուտ Վանի  
սովատանջների:

Վաղը, կիրակի փետրվարի 24-ին պ. Կօղլօվ  
(յալտնի ձեռնածուն, Փօկուսնիկ), տալու է մի  
ներկայացումն Արծրունու թատրօնում: Սկիզբը  
7 1/2 ժամին: Թատրօնը յարմարեցրած է այդ ներ-  
կայացմանը:

Աղեքսանդր Մովսէսեան

Կիրակի, փետրվարի 24-ին Գօդքրուա եղբայրների Թիֆլիսի Քրանստիական ցիրկում լինելու են երկու մեծ ներկայացումներ. մէկը առաւօտը, երեսաների համար կը սկսվի ուղիղ 12 ժամին, իսկ միւսը երեկոյեան, կը սկսվի 8 ժամին. Երկու ներկայացումներն էլ շատ բազմակողմանի են լինելու:

Դա օչագույք է. Սարդարու նախարարութեաց աշ  
զարկեց մեզ 240 բուրլ հետևեալ նամակով. «Ահա  
նամակովս ուղարկում եմ մի քանի անձանց նուի-  
րատութիւններ, ընդամենը 240 բուրլ, ինդրելով  
խոնարհաբար շուտով հասցնել այդ փողերը Վան  
քաղաքի սովամահ մեր եղբայրակիցներին և տապա-  
գել ԱՄՀակիս մէջ նուիրատունների անունները:  
Պետրոս Նարաթեանց 100 ր., Յովհաննէս Հալա-  
բեանց 25 ր., Ներսէս Տէր-Ներսէսեանց 30 ր.,  
Աղա Աղայեանց 15 ր., Ալէքսանդր Խահակիեանց  
50 ր., Ղահրաման Յովհաննէսեանց 10 ր., Եազոր  
Յովհաննիսեանց 5 ր., Մամիկոն Եախչեանց 5 ր.,  
Ընդամենը 240 ր.»

Ստացանք ԶԻԿԻՇԼԵԱՐԻՑ 102 բուրլ յօդուա  
և Ալբարատեան ընկերութեան հետևեալ անձնագիւ-  
րից. Սարգիս Լալայեանց 20 ր., Արշակ Տէր-Ար-

Գիսեանց 3 ր., Աստուծատուր Մելիքեանց 1 ր.,  
Անդրէս Ղուկասեանց 3 ր., Յովհաննէս Բաղի-  
րօվ 5 ր., Յովհաննէս Պետրոսեանց 2 ր., Մ. Պա-  
պաեան 1 ր., Նիկոլայ Մէլիքօվ 5 ր., Յակոբ Ճա-  
բարօվ 2 ր., Յակոբ Դանդարեանց 2 ր., Մինաս  
Առաստակէսեանց 1 ր., Աւետիս Մէլիքեան 1  
ր., Յովհէփ Սարգիսեանց 1 ր., Գաբրիէլ Սարգի-  
սեանց 1 ր., Գէորգ Յակոբեան 1 ր., Ան-  
յայտ 2 ր. 50 կ., Մէլքում Տէր-Յարութիւ-  
նեանց 1 ր., Աւետիս Տէր-Օհանեանց 20 ր.,  
Անյայտ ոմն հայ 2 ր. 35 կ., Ազգասէր 3 ր.,  
Անյայտ ոմն 1 ր., Մէսնիկօվ 1 ր., Անյայտ 1 ր.  
Ներսէս Տէր-Յովհաննէսեանց 2 ր., Անյայտ 1 ր.  
25 կ., Մէրգէյ Քոչարօվ 2 ր., Վահան Մէսրով-  
քեան 5 ր., Թուրքմէն մօլլա Դուրդի 5 ր., Մի-  
թուրք 5 ր. 65 կ., Անյայտ 25 կօպ.: Գումարն է  
102 բուրլ:

Ստացանք 38 բուրլ յօգուտ Թիւրքիայի հայ սովատանջների ԹիֆլիՍՈՒՄ բնակվող հետեւեալ անձինքներից։ Օտարական ոմն Մ. Բ. Յ. Յ. Առաջանութեան 3 ր., Մինաս Եարդուկեանց 3 ր., Ս. Ա. Յ. Յ. Յ. Աղաբեկեանց 2 ր., Յովհաննէս Թուումեանց 2 ր., Յակովը Տափուկեանց 2 ր., Գրիգոր Աւետիսեանց 2 ր., Լեոնտի Կօստյուե 2 ր., Աէրգէյ Յարութիւնօվ 1

թղն։ Անսովոր խիստ ձմեռը այնպէս էլ  
ստ ճանապարհները անանցնելի դարձեց։  
որենի բերելը Ռուսաստանից և Պարսկաստանից  
անապարհների գժուարութեան և տեղափո-  
ռութեան ահազին ծախսերի պատճառով  
նշանարին գարձաւ։ և չը նայելով այս բոլո-  
ն, Թիւրքաց վարչութիւնը անտես առնելով  
ող թշուառութիւնը, սաստկութեամբ հար-  
ր է պահանջում հարստահարված ժողո-  
ողից, հասցնելով նրան վերջին ծայր յուսա-  
ատութեան։ Հայերի թշուառ դրութիւնը  
անով էլ աւելի անմիտիթար է դառնում,  
զինքից զուրկ ազգաբնակութիւնը մշտա-  
սն երկիւզի մէջ է ապրում քուրդերի յար-  
սկումների առջև։

Բերլինի կօնզրէսը, շարունակում է զերմա-  
սկան լրագիրը, դաշնագրութեան 61-որդ  
օդուածի զօրութեամբ, մարդասիրական լզ-  
ացմունքներից դրված, պարտաւորեցրեց Բ.  
ռանը անյապաղ մայնել հայերով բնակված  
էիրներում այն վերանարութիւնները, ու-

նկ պէտք է բարւոքէին հայերի դրութիւն,  
ալաշտապանելով նրանց կեանքը և կայքը:  
Դուռը խստացաւ կատարել այդ վերանու-  
գութիւնները և պարտաւորվեցաւ պարբե-  
սկան կերպով տեղեկացնել մեծ պետութիւն-  
ութիւն այն միջոցների մասին, որոնց գործ  
նելու է իր յանձն առած պարտաւորութիւն-  
ութիւն կատարելու և պետութիւնները յատ-  
ապէս պահպանեցին իրանց ձեռքում գործ

վիթու վերանորոգութիւնների վրա վերահս-  
լու իրաւունքը: Բայց, ասում է «Köln. Zeitg.»  
աղբի թղթակիցը, մինչև այժմ ոչինչ չը  
ատարվեցաւ որպէս զել լրում տրուի դաշնա-  
ռութեան զօրութեամբ հաստատված պար-  
աւորութիւններին: Թիւրքաց տէրութիւնը  
շխատում է առիթ բռնել իր Փինանսական  
ննախանձելի դրութիւնը խոստացած վերա-

բոգովաթիւնները և բարւոքումները յետ զը-  
նըու համար: Եթէ մինչև այժմ մեծ պե-  
տութիւնների ներգործութիւնը այդ խնդրի  
էջ միաձայն և եռանդու չէր, կարելի է  
ուսալ որ այսուհետեւ պետութիւնները այլ  
և չեն կարսղ յապաղել իրանց ձայնը բարձ-

συγνητοις οι αιτειθι τι αιτειθι γεγονοντι οπιζοντι  
χρονιασι προτεραιον αποδεικνυει εκεινην καιροντι ηρω-  
αριθμοντι προτεραιον αποδεικνυει εκεινην καιροντι ηρω-  
αριθμοντι προτεραιον αποδεικνυει εκεινην καιροντι ηρω-  
αριθμοντι προτεραιον αποδεικνυει εκεινην καιροντι ηρω-

ՄԻՍԻՈՆԱՐՆԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

«Թայմզ» լրագրին .յունվար 20 թիւ թերթին

Այս թափի թղթակցէն առած մէկ նոր  
ամակը կը հրատարակէ, որ Թուրքիոյ մէջ  
մերիկայի Միսիօնարաց գործողութեանցն և  
նիկ բողոքականաց վիճակին վրայ հետաքրք-  
ական տեղեկութիւններ կուտայ, որք յիշեալ  
Միսիօնարաց կողմէն պաշտօնապէս հրատա-  
ակինէ առաջ իրեն հաղորդուած են եղեր:  
Անօգուտ չեմք համարիր այս վիճակազրական  
տեղեկութիւններն համառօտիւ մեր ընթեր-  
ողաց աչքին առջև դնել: Ամերիկացի ա-  
ւազին Միսիօնարը Կ. Պոլիս 1821-ին հասած  
ինելով, Թիւրքիոյ մէջ Միսիօնարաց գործն  
անընդհատ 49 տարուան միջոցի մը վրայ կը  
տարածի: Մամուլը մէծ միջոց մ'եղած է  
իրենց ձեռք և Ս. Գիրը Արաբերէնի, Հայե-  
էնի, Թուրքերէնի, Պուլզարերէնի, Հրէական



